ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻՒ 41 — ՇԱԲԱԹ — 7 ՅՈՒՆԻՍ 1908

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ

ՉԵՂԻՐ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՖ ԵՒ ԸՆԿ.

Պաչճէ-Գարու, Օռոզտի-Պաք հաստատութեան դէմ, թիւ 16

Հատը 40 փարա

شرکت مطبعه‌سی (آ. آصادوریان) — باب عالی جاده‌سنده نومرو ٥٢

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԱՄԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճաւտհսի թիւ 52

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի ըլլայ․ բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԷՐ
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ
THE SINGER
MANUFACTURING COMPANY

մեքենան լաւագոյն է. այն մեքենան ամենէն կատարեալ լաւագործութիւնը, հաստատութիւնը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն մարդ Սինկէրի մեքենան կը գնէ։

ՍԻՆԿԷՐի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ։

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, Թիւ 343 եւ 343 կրկին.
(2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԳԱԼԱԹԱ (1. Սինկէր խան, Թիւնէլի առջեւ.
(2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ (1. Սուլթան համամ.
(2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թիւ 13.

ՍԿԻՒՏԱՐ Չարշը Պօյու, Թիւ 120.

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ 343 և 343 կրկին, Տիւզօղլուի տունը։

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական։ — Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 ղրշ. վեցամսեայ 45 ղրշ. գաւառներու համար տարեկան 108 ղրշ. վեցամսեայ 60 ղրշ. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառում՝ տասը փարա։ ԱՐԵՒԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով։

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ։

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար։ Ծանօթ Դէմքեր եւ երբեմն ալ տեսարաններ։ Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բաց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւայլն։

ԱՐԵՒԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագինն պէտք է ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին Էֆ. Պօյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խմբագրատունը։

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻՒ 41 ԳԱՐՆԱՆ 7 ՅՈՒՆԻՍ 1908

ՎԱՍԵՄ, ՄԻՆԱՍ ԷՖ, ՊՈՒՐՈՒՆՍՈՒԶԵԱՆ

ՊԱՇՏՕՆԱՏԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ
ԵՒ ԳՐԱՓՆՆԻՉ ՀԱՅ ԹԵՐԹԵՐՈՒ

ՄԱՀ

ՎՍԵՄ. ՄԻՆԱՍ ԷՖ. ՊՈՒՐՈՒՆՍՈՒԶԵԱՆԻ

ՊԱՇՏՕՆԱՏԷՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՐԱՔՆՆԻՉ ՀԱՅ ԹԵՐԹԵՐՈՒ

Վսեմ. Մինաս Էֆէնտիի մահովը մէկն ալ կը բաժնուի մենէ, իր հաւատարիմ անխոնջ եւ անձնուէր ծառայութեամբը Պետութեան, սիրուած եւ գնահատուած ամէնէն :

Հայ Մամուլը՝ մեծ կորուստը կողբայ այսօր. իր մահը այնքան վաղահաս, այնքան անակնկալ : Վսեմ. Մինաս Էֆէնտի, ոչ թէ միայն իր գործին մարդը, այլ եւ ընկերական շրջանակներու մէջ մին էր այն դէմքերէն՝ եւ գրաւած էր այն ազնիւ դիրքը՝ որ ինքնին պարծանք մը կրնայ համարուիլ մեր համայնքին :

Երեսուն երկար տարիներէ ի վեր մտած Պետական պաշտօնէութեան բաղձացեալ շաւղին մէջ, իր բարւոք ծառայութեամբ եւ հաւատարմութեամբը բարձրացած էր մինչեւ Տպագրական Տեսչութեան առաջին գրաքննիչի պաշտօնին, ուր մնաց եւ աւանդեց հոգին, ամէնուն սէրն ու յարգանքը վայելելով : Ինքն էր որ ամէն Չորեքշաբթի կուգար աչքէ անցնել մեր թերթը, եւ խմբագրութիւնս երախտագիտական շատ բան կը պարտի իրեն. ինքը մի առ մի կը կարդար եւ մեզի քաղցրութեամբ կը խրատէր հեռու կենալ միշտ անձնականութեան շուրջ դարձող գրչի յարձակումներէ. իր բնաւորութեանը պէս զուարթութիւնը կը սիրէր, եւ կախորժէր թեթեւ ոճով գրուածքներէն, միշտ անուշ ժպիտը շրթներուն վրայ :

Իր մահը, ինչպէս բովանդակ մամուլին՝ նոյնպէս եւ մեզ մեծ ցաւ պատճառեց արդարեւ :

Յուղարկաւորութեան տխուր արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 1 Յունիս, Բերա, Ս. Երրորդութիւն եկեղեցին, նախագահութեամբ տեղւոյն քարոզիչ Գեր. Տ. Հմայեակ Եպս. Դիմաքսեանի, իր շուրջն ունենալով՝ Տ. Տ. Գրիգորիս Աբարթեան եւ Տիրայր վարդապետները, բազմաթիւ քահանաներ, դպիրներ եւայլն : Մեռելական արարողութիւններէն վերջ՝ Նախագահ Սրբազանը բեմ ելլալով իրեն յատուկ ճարտար դամբանականով մը վեր առաւ Վսեմ. Հանգուցեալին բարեմասնութիւնները, եւ երկնային մխիթարութիւն յայցեց այրի Տիկնոջը եւ պարագաներուն, ուրկէ վերջ դագաղը եկեղեցիէն հանուելով դրուեցաւ շքեղ մեռելակառքի մը մէջ եւ փոխադրուեցաւ Գապըքաշ. յուղարկաւորներու ստուար բազմութիւն մը կառքերով կը հետեւէին մեռելակառքին, ուրկէ մասնաւոր շոգենաւով մը փոխադրուեցաւ Սկիւտար, մարմինը ամփոփուելու համար Ազգ. Գերեզմանատունը՝ ընտանեկան դամբարանին մէջ :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ, խորապէս զգացուած, իր սիրելի գրաքննիչին անակնկալ մահուան առթիւ, կը փութայ իր ցաւակցութիւնը յայտնել՝ Այրի Տիկնոջը՝ Տիկին Մարի Պրունսուզի, զաւակներուն եւ համայն գերդաստանին ու պարագաներուն:

ՍԻՆԿԱԲՈՒՐԷՆ ՓԵՍԱՑՈՒ

ՊԱՐԶ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Երեք աղջիկ և մէկ ... մտմտուք ունէր Մելքոն աղան, Օրթա Վէզիր խանին մէջ անյիշատակ ժամանակներէ ի վեր հաստատուած մանածի վաճառականը։ Պիստոս, Էլպիս, Ագապի, աւա՛ղ իր երեք աղջիկները, և զանոնք հարուստ աղաքներու հետ ամուսնացնել, ահա՛ իր միակ մտմտուքը։

— Նա՛, քա՛, Աւեստարանները կ'անցնին կոր, կ'ըսէին դուռը կայնող կիները և աղջիկները, երբ երեք քոյրերը փողոցէ մը կ'անցնէին քով քովի։ Ինչո՞ւ այդ Աւեստարան հեգնող մականունը փակցուցած էին այդ դեռատի և սիրունկէկ քոյրերուն։ Ատոր պատճառը կար։ Կնքահայրնին՝ Եախա-Թոթվողենց Մեսրոպը, որ երկար տարիներ միլիքեզիմուքիւն ըրած էր Այվալըքի, այդ գերազանցապէս յունաբնակ քաղքին մէջ, առիթը ունեցած էր իր պարապոյ ժամերուն՝ Հոմերոսի լեզուն սորվելու և վերադարձին, ցուցունելու համար թէ այլեւս յունարէն լեզուն որ և է գաղտնիք չունէր իրեն համար, այդ հելլենական անունները հետզհետէ տեղաւորած էր Մելքոն աղայի իրարու ետեւ ծնած աղջիկներուն վրայ։

Եւ որովհետեւ այդ անունները գրեթէ անսովոր էին գործածել, շատերը իրեն կը հարցնէին — Մա՛, Մեսրոպ, ուրիշ անուն չի՞ գտար։

— Դուք ի՞նչ գիտէք, շատ աղուոր անուններ են անոնք, Պիստոս՝ Հաւատք ըսել է, Էլպիս՝ Յոյս և Ագապի՝ Սէր, — և յունական շեշտով մը կ'աւելցնէր — Բիսքիս, Էլբիս, Էգ Աղաբի, և այնպիսի յոխորտանքով այդ երեք բառերը կը կրկնէր, որ կարծես Իլիականը ինքը գրած ըլլար։

Եւ որովհետեւ այդ երեք բառերը հիմը կը կազմեն քարոզութեանց, Զախչախենց Մերկերը, օր մը, այդ աղջիկներուն վրայ բացուած խօսակցութեան մը միջոցին, իր քոհանայ մարդու համբաւին վրայ ծեփ մը եւս աւելցընելու համար, սպպէս բացագանչած էր։

— Աղջիկ չեն քիմ, Աւեստարա՛ն, էգէնսիմ, Աւեստարա՛ն. Հաւատք, Յոյս, Սէր, ուրկէ՞ց ալ գտեր են։ Այդ թուականէն ի վեր, Աւեստարան լաղապը փակած մնացած էր այդ աղջիկներուն կռնակն ի վար։

Երբ երբեմն պատահէր որ վաճառատուն մը երթալու համար չուկայէն անցնէին, մեր խանութպան և սրամիտ տղաքները իրարու կ'ըսէին, անոնցմէ իմացուելու չափ բարձր ձայնով.

— Մա՛, Սէրգօ, խաչ հանէ՛, Աւեստարանները կ'անցնին կոր։

Եւ խեղճ աղջիկները կաս կարմիր կը կտրէին իրենց քօղին տակէն։ Աղուորիկ ալ էին խեղճերը, մանաւանդ Պիստոսը։

— Մեծը՝ բարասըղ ալ կը քչուի կը մտածէին ծնողքը, երբ մտքերնին դար թէ ատոնց մէյմէկ էրիկ ճարելու էր։

Քսանըվեց տարու հաղիւ կար Պիստոս։ Լօնտօնէ բերուած բիչբայնէ կարասիներու ներկին պէս, մազերը տեսակ մը գոյն ունէին, ո՛չ դեղին և ո՛չ ալ կարմիր. բայց նորէն շատ ախորժելի գոյն մը, որ իր վրայ կը հրաւիրէր բոլոր տեսնողներուն ուշադրութիւնը։

— Ինչ քոհանայ մաղի գոյն է, կ'ըսէիր դու քեզի և կրկին անգամ կը նայէիր, անառակ նայուածքով մը։

Դեղձի մը պէս՝ վարդագոյն և աղուամազոտ գիրգ այտեր ունէր Պիստոս, և մորթ մը այնքան փափուկ, այնքան թափանցիկ որ մարդս պիտի քաչուէր երկու անգամ իրարու վրայ պագնելու, վախնալով որ այդ մորթը չի պատռուի։

Հիանալի ձեռքեր և լուսացայտ աչքեր ունէր Մելքոն աղային անդրանիկ աղջիկը, և երբ երեկոյթներու մէջ, տեսակ մը ինքնավստահ կանխամտածութեամբ, պզտիկ fark մը կը բանար իր երկու ճերմակ կուրծքերուն միջեւ աչքերդ կը գոցէիր։

Երկրորդը՝ Էլպիս՝ շատ աւելի կանոնաւոր, աւելի զմայլելի կազմուածք մը ունէր քան իր մեծ քոյրը։ Պզտիկ լճակի մը պէս մեծ աչքեր ունէր, որոնց բիբերը խօսուն, ճարտասան շարժուածքներ ունէին և ան-

պատճառ վրադ յառածնուն պէս, մեղսաթաւալ գաղափարներով կը լեցնէին գլուխդ և չգիտեմ ինչ մը կը դնէին կուրծքիդ տակ, որ ժամերով տրոփել կուտար սիրտդ և թունդ կը հանէր հոգիդ։

Բրէնսէսները յատուկ քալուածք մը ունէր, որու միջոցին իր ազդրերուն ներդաշնակ գիծերը՝ մէջքին վերջաւորութեան հետ խառնուած, յայրատ, խենէշ վէտվէտումներ կունենային, որոնց ի տես, մանկլաւիկը ըլլալ պիտի ուզէիր այդ աղջկան, կեանքդ ամբողջ իր փէշերը վեր վերցնելու համար։

Աւետարա՜ն ... ատանկ Աւետարանի տակ ո՞վ չպիտի ուզէր գլուխը դնել ...։

Օրիորդ Ագապին, իր ծնողացը կրտսեր աղջիկը, հայրիկին և մայրիկին ծնողական զեղումներուն այդ յետ գրութեանը, նուազ գեղեցիկ էր քան միւսները, բայց, այդ ֆիզիքական ձախողուածին փոխարէն, Աստուած առատ խելք ու միտք տուած էր իրեն, այնպէս որ շատ անգամ, իր մեծ քոյրերուն forբեի նամակները ինք կը գրէր անսխալ հայերէնով մը։

— Մեր քովը ամէն տեսակէն կը գանուի, կը հառաչէր Մելքոն աղա, երբ չուկան, գործի դադարի միջոցին, խանութին դրան առջեւ, հաճի Թորոսին հետ կարծեաց փոխանակութիւններ կընէին ամուսնութիւններու ներկայ դժուարութեանց վրայ։

— Ինչ ժամանակներու հասանք, Թորոս աղա, ճէմ կիւզէլիմ աղջիկ տուր, ճէմsէ փարայ, սաճիմ մենք սօխալէն կ'ժողվենք կոր։

— Խըսմէթէն անդին պան մը չըլլար, Մելքոն աղա, դուն գործդ նայէ։ Եւ այսպէս օրերը, տարիները կ'անցնէին։

Իբրեւ խղճամիտ հայր սակայն, Մելքոն աղան ամէն բան ըրած էր, չիտակը, իր աղջիկները տեղաւորելու համար։ Երեք տարի իրարու վրայ, օդափոխութեան պատրուակին տակ, գեղէ գեղ ցուցադրած էր իր զաւակները։

Ամէն քահանաներու ականջին բաներ մը փսփսացած էր և չորս անգամ պարահանդէս դրկած էր Պիստոսը և Էլպիսը։ Կիրակիէ կիրակի քարափը կը պտըտցնէր զիրենք և վերադարձին անպատճառ մէկ երկու գաւաթ գարեջուր խմցնել կուտար։

Այս ամէն սովորական հնարամտութիւնները միայն իր խիղճը կրցած էին հանդարտեցնել առանց հանդարտեցնելու աղջիկներուն ամուսնական հակումները։

Աղջիկները օրէ օր կը մեծնային և մինչեւ հիմայ, բացի երկու երեք էսնաֆ տղաքներէ, ոչ ոք իրենց դուռը զարկած էր։

Բայց ամէն ծնողքներու պէս, վերջին յոյս մը ունէին, — և արդէն սուրճի գաւաթի մէջ բաղդ նայող կին մը, այդ իմաստով բան մը գուշակած էր — օրին մէկը անշուշտ փեսացու մը դէմերնին պիտի ելլէր կամ Ռանկունէն կամ Սինկաբուրէն և կամ առնուազն Պոմպէյէն։

Մանաւանդ որ Մելքոն աղան և տիկինը, ուրիշներէ աւելի հաւանականութիւն ունէին Ծայրագոյն Արեւելքէն փեսայ մը գտնելու, քանի որ մօտաւոր ազգականներ ունէին Սէյլանի մէջ, եղբօրորդի մը ի Կալկաթա, ուրիշ մը ի Լի-Ցու-Ջու, քենակալ մը Պարսից ծոցին եզերքը և աներորդի մը Հիմալայաներու ստորոտը։

Մինչ այս մինչ այն, Պիստոսը, Էլպիսը և երբեմն ալ Ագապին, իրենց անկայուն վիճակին դառնութիւնները մոռնալու համար իրենց դրացի երիտասարդներուն հետ կը սիրաբանէին մայրիկին քթին տակը։

Գործերը այս վիճակին մէջն էին, երբ երկուշաբթի առտու մը արտասովոր դէպք մը պատահեցաւ Մելքոն աղային վաճառատունը։

Բարձր գլանաձեւ գլխարկով, սեւ, վայելուչ ռըտէնկոթ մը կռնակը, ձեռնոցները՝ ձեռքին մէջ, բարձրահասակ, գեղադէմ երիտասարդ մը, կառքը կայնեցնել տուաւ Օրթա Վէզիր Խանի մեծ դռան առջեւ և Օթէլ Հիւկի բարապանը առջեւը ձգած ուղղակի յառաջացաւ Մելքոն աղայի խանութը։

Մելքոն աղան, այդ պահուն, կրկնոցը վրայէն նետած էր, և ցած աթոռակի մը վրայ նստած՝ էպիւրշիւմէ կապ մը կանցնէր համրիչին։

Օտար երիտասարդը և բարապանը կանգ առին իր առջեւ, և այս վերջինը նամակ մը երկնցուց մանածի վաճառականին։

Նամակը առնելու պահուն ներքնապէս մտածեց թէ այդ մարդիկը անպատճառ քովի խանութը կը փնտռէին որ յոյն սեղանաւորի

մը՝ էր և սակայն իբրեւ ճշմարիտ խանութպան, հետաքրքրութիւնը ունեցաւ ակնոցները գրպանէն հանելու և ակնարկ մը նետելու այդ հասցէին վրայ։

Մեծարոյ Պարոն Մելքոն Փէհրիզեան

Բայց այդ նամակը իրն էր, և անգամ մըն ալ մարդուն երեսը նայելէ վերջը, երբ պահարանը բանալու վրայ էր, օտարականը գլխարկը կը հանէ և քաղաքավար ձեւով մը.

— Պարոն Փէհրիզեանցը հրամանքնիդ է՞ք, կը հարցնէ, տարաշխարհիկ առոգանութիւնով մը։

— Ի՞նչ կայ որ ...

— Ոչինչ, ո՛հ, ոչինչ, միայն պիտի փափաքէի որ ձեր ձեռքը սեղմեմ, քանի որ նամակը ...։

— Ներս հրամեցէք, միւսիւ։

— Շնորհակալ եմ, կըսէ օտարականը և ներսը կոտրած աթոռի մը վրայ կը նստի։

— Անանկ է նէ նամակը կարդամ։

— Օ՛հ, խնդրեմ։

Եւ Մելքոն աղա կ'սկսի կարդալ։

«Սիրելի Մելքոն պարպա,

Նամակս բերողը Սինկարուի էն հարուստ մարդուն զաւակն է, Պարոն Արզար Մազիստրոս Մաքլում, որ Եւրոպա պիտի երթայ։ — Պարագայէն կարենալ օգտուելուս համար է որ ձեր անունը տուի իրեն եւ յանձնարարեցի որ գայ ձեզ տեսնէ։

Շատ շնորհքով տղայ մըն է, գործունեայ պարկեշտ եւ միլիոններու տէր։ Հայրը բոլոր գործերը իրեն ծրգած է։

Կը խնդրեմ ուրեմն, սիրելի պարպա, պէտք եղած պատիւները ընես իրեն եւ զոհ ընես զինքը։ Կարելի է բան մըն ալ կելլայ, ալ դուն գիտես։

Շատ շատ բարեւ ծամային, Պիստոսին, — ականջը քաշէ իմ կողմէս — Էլպիսին եւ Ագապիցային։

Երկու ձեռքերդ կը պագնեմ եւ կը մնամ կարօտիւ ձեր հարազատ եղբօրորդին։

ԲԵԹՐԱՌԻ ՓԷՀՐԻԶԵԱՆ

Ելեքտրական բիլէ մը ցնցուածի պէս, Մելքոն աղան կը շուարի ինչ ընելիքը չի գիտնար, կրկնոցը աճապարանօք վրան կանցընէ և երիտասարդին դառնալով.

— Կը ներէք, չի ճանչցայ ձեզի, սանկ քանարէին վրայ հրամեցէք, խահվէ՞ կուզէք կամ չայ, — և գրագիրին դառնալով — Մտեփա՛ն, սրտեղէն երկու չայ զուրցէ։

— Շնորհակալ եմ, պարոն, սովորութիւն չունիմ կէսօրէ առաջ որ եւ է բան խմելու, և յետոյ չեմ ուզեր զձեզ անհանգիստ ընել։ Ես ուզեցի ձեզի ներկայանալու պատիւն ունենալ Պ. Փէհրիզեանի յանձնարարութեան վրայ, կը խնդրեմ, չեմ ուզեր զձեզ զբաղեցընել։

— Ի՞նչ ըսել է, մեր պարտականութիւնն է, ինծի մնած պատիւ է որ մինչեւ հոս եկաք։ Թող տունը հրամմէյիք ...։

— Խնդիր չէ, պարոն։

— Էյ, ե՞րբ եկաք նայինք։

— Ճիշտ այս առաւօտ։

— Շատ պիտի կենա՞ք։

— Մինչեւ շաբաթ օր և ապա կը մեկնիմ Մարսէյլ, Ֆրանսական Մէսաժբրիով։

— Չայ մը առէք, աղէկ է, իրաւ է քի ձեր չայերուն չի նմանիր, բայց սա դիմացի Աճէմը գէշ չի պատրաստեր։

— Կը խնդրեմ, նախ որ ժամանակ չունիմ, պանդոկը ժամադրութիւն տուած եմ ժամը 11ին, և — ժամացոյցին նայելով — ճիշտ քսան վայրկեան կայ։

— Ատ եղա՞ւ, չի կրցանք տեսութիւն ընել, ո՞ր լօքանթան իջած է՞ք։

— Ինչպէ՞ս։

— Սանֆիմ ո՞ւր իջած է՞ք։

— Օթէլ Հիւկ, քարափին վրայ, չէ՞։

— Բօստային վրայի՞նը։

— Լաւ չեմ գիտեր, բայց կարծեմ թէ այդ է։

— Էն աղէկ օթէլն է։

— Ինձ այնպէս ըսին, ուստի ուրախ եմ որ ձեզ հետ ծանօթացայ և պիտի խնդրէի որ վաղը երեկոյեան ճաշը միասին ընելու պատիւը ընէիք ինծի։

— Էյէր տունը սէպէպ մը չի կայ նէ, կուգամ, մէրսի։

— Կ'սպասեմ, 8ին կը ճաշենք. ցտեսութիւն։

— Երթաք բարով, շատ պատիւ ըրիք, մէրսի, նորէն տեսնուինք, բան մը չի հասկըցանք, մինչեւ շաբաթ հոս է՞ք, անանկ չէ՞։

— Այո՛, այո՛։

— Իշալլահ նորէն կը տեսնուինք, մէրսի, շատ պատիւ ...։

Երիտասարդը խոնարհութիւն մը կընէ և բարապանին հետ կը մեկնի։

(Շարունակելի) Ց. ԱԼՓԻԱՐ

ԿԱՎՌՕՇԻՆ ԷՋԸ

(Կը խնդրուի Պ. Գրաշարապետէն՝ Կավռօշին . . . էջը չշարել)։

ՎԱՐՊԵՏԻՆ ԳԱՑԹԱԿՂՈՒՄԸ

Մարդը իր արժանապատուութեանը չէր կերցներ եղածը։

Իր գաւառացի խոհարարի ամբողջ պատուախնդրութիւնը կ'արթննար այն բանին առջեւ, զոր չէր կլլեր։

Խոհարար ըլլալը արգելք մը չէ՛ ... արժանապատուութեան զգացումներ ունենալու։

Ու վարպետը իր խոհանոցին մէջ կը փըրփըրէր, կրակ կը կտրէր։

— Եղբա՛յր, մեր մեմլէքէթը աստնկ բան չէ տեսնուած, կը մտածէր ինքնիրենը պարզամիտ մարդը, և որովհետեւ իր մեմլէքէթը չկար այդ բանը, չէր ալ ուզեր որ ուրիշ տեղ ըլլայ։

Իր միտքին սահմանափակումը կ'արգիլէր իրեն տրամաբանելու որ՝ ի՛նչ որ երկիրը չկայ կրնա՛յ շատ աղէկ գոյութիւն ունենալ ուրիշ տեղ. — միթէ իր մեմլէքէթը Թրամուէյ, շոգեկառք, Թիւնէլ նաւիլ կա՞ր ...։

×

Ի՞նչ էր արդեօք վարպետին գայթակղութեան պատճառը։

Ահա՛ երկու բառով։

Ամիս մը կ'ըլլար որ մտած էր Պ. Կաւակերեանի տունը խոհարարի պաշտօնով։

Տունը շատ հանգիստ էր, ամսականը՝ փայլուն, աղան՝ ո՛չ թիթիզ, տիկինը՝ բարի ...։

Բոլո՛ր ատոնք աղէկ, բայց ինչ որ վարպետին գործին չէր գար ... պատուախնդրական պարագայ մըն էր։

Կը տեսնէ՞ք կոր ո՛րչափ լուրջ է խնդիրը։

Ամէն օր, Պ. Կաւակերեան իր գործին երթալէ վերջ, Պ. Գրաքոս անուն երիտասարդ մը կուգայ տուն և երկու ժամ տիկինին հետ կ'առանձնանար։

Ամբողջ Թաղեցիները այս պարագան գիտէին և բանբասանքը ա՛յնչափ առած քալած էր։

— Հի՛ հի՛, կ'ընէին նշանակալից կերպով մը աչք քթթելով երբ տիկին Կաւակերեանի խօսքը ըլլար։

Վարպետն ալ նշմարած էր այս բանը, և եթէ ձեռքէն գար՝ հարուած մը պիտի իջեցնէր Պ. Գրաքոսի գլխուն։

— Աստուծո՛ւն օրը այս մարդը ի՞նչ գործ ունի հոս, կը մռլտար շարունակ, մտածելով հետ միամիտ ի՞նչ կ'ընեն կոր վերը, աղան գիտէ՞ արդեօք այս բանը ...։

«Մեզի կերակուր եփէ» ըսած էին լոկ վարպետին, բայց այս վերջինը միայն կերակուր եփելով չգոհանալով Պ. Կաւակերեանի կնոջ պատիւին վրայ Գաբրիէլ հրեշտակապետի դերը կ'ուզէր ստանձնել։

Ու վարպետը, որ ա՛յնչափ համեղ կերակուրներ կը կերցնէր ուրիշներու, չէր կրնար այս եղածը ... ինքզինքին կերցնել։

— Աղային իմաց պիտի տամ, կ'ըսէր շարունակ, մենք աստնկ բան խապուլ չենք ըներ ...

Մարդը իր պարտականութեան մէջ թերացած ըլլալը կը դգար, երբ չէր երթար իմաց տալ տեսածը իր աղային, որուն հացը կուտէր կոր։

×

Ու գաւառացի նախապաշարուած մարդը վերջապէս առտու մը խորհրդաւոր ձեւով մը Պ. Կաւակերեան խոհանոց կանչեց և ըսաւ նոր խորհրդաւոր ձեւով մը.

— Աղա՛ս, ըսելիք մը ունիմ քեզի ...

— Խօսէ՛, վարպետ, պատասխանեց միւսը։

Վարպետը շուարեցաւ. մնաց թէ ի՛նչպէս բանար խօսքին թելը։

Բայց իր պարկեշտութիւնը յաղթեց իր վարանումին։

— Ձեզ գիտեր ինտո՛ր ասիմ, աղա, ըսաւ ...

— Ի՞նչ բան, հարցուց միւսը հետաքրքրքիր։

— Զելլա՞ս բարկանաս ...

— Ի՞նչ կայ որ։

— Սանֆի ես միայն ճիտիս պարաքը կ'անեմ կոր։

— Խօսէ՛ ըսինք ա՛ վարպետ, քու լեզուիդ տակը բան մը կայ։

— Ահա՛ եղածը, աղա՛ս, ամէն օր քու չարչու երթալէդ էտքը, հոս ուրիշ կէօզլիւկլիւ միւշիւ մը կուգայ կօ և մատամիս հետ սահաթներով մինակ կը նստին ...

Պ. Կաւկերեան ժպտեցաւ։

— Ծօ՛, վարպե՛տ, պատասխանեց, հիչ աս տունը մէկ հոգիով կը դառնա՞յ։

—

ՇԲՋՈՒՆ ԱՏԱՄՆԱՐՈՑԻ

Գիտէ՞ք, ի՞նչ ըսել է ակռայի ցաւը։

Եթէ չէք գիտեր, կը մաղթեմ որ յաւէտ չգիտնաք։

Սակայն, ամէն անոնք որ գիտեն ակռայի ցաւին ի՞նչ ըլլալը, պիտի կարեկցին անկեղծաբար իմ առջի օրուան վիճակիս վրայ։

Տասը հազար ոսկինոց անվճար մնացած գանպիալ մը ոչի՞նչ է ակռայի զօրաւոր ցաւի մը քովը, և մարդ յոժարակամ իր բոլոր ... պարտքերէն վազ կ'անցնի, պայմանաւ որ ակռայի ցաւն ալ հետը ա՛ցնի։

Փորի ցաւը, գլխու ցաւը, կուշտի ցաւը, նոյն իսկ ... տղաբերքի բոլոր ցաւերը տըղայական բաներ կը մնան ակռայի ցաւին քովը, զոր թշնամիներուս անգամ չեմ մաղթեր։

Չեմ գիտեր որ մեր նախածնողքը Ադամ ու Եւա ... ակռայի ցաւէ բռնուա՞ծ են երբէք և եթէ բռնուած են՝ ի՞նչպէս դարմանած են զայն, քանի որ այն ատենները չեմ կարծեր թէ ատամնաբոյժներ գոյութիւն ունենային։

Ամէն պարագայի մէջ, առջի գիշերուան ակռայի ցաւս ահռելի բան էր, ա՛յնչափ ահռելի, որ միջոց մը խորհեցայ ակռայի ցաւէս ազատելու համար ... գլուխս կտրել նետել, ակռանե՛րս ալ միասին։

Բայց, վասն զի ա՛յնչափ քաջութիւն կը պակսի ինէ, լաւագոյն համարեցի բերնիս մէջ ցաւող ակռաներուս վրայ թափել մեր քովի գինետան բոլոր ըմպելիքներու ամենայոռի տեսակները, ապսէնթ, քոնեաք, օղի, քացախ, — վերջապէս տէքօղիթօ մը ամբողջ։

Չո՞ւր ջանք, անօգո՞ւտ վաստակ։

Ու դիւահարի նման կը դառնայի անկողնիս մէջ, որուն բարձերը օդին մէջ կը պարէին ցաւիս սաստկութենէն, ոտքերս կեցեր կը զարնէին պատերուն, բռունցքներս հարուածներ կ'իջեցնէին խեղճ այտերուս ...։

Մինչեւ որ վերջապէս հերոսային որոշումը տուի ատամնաբոյժ մը կանչելու։

— Մարկո՛ս, տանֆիսք մը կանչէ՛, պոռացի մեր աւանակ սպասաւորին։

— Տանֆիսը ի՞նչ տի անես, աղա՛, պատասխանեց Մարկոս շլմորած։

— Ծօ՛, էշութիւն պէտք չէ, տիեցի՛ն, կը հասկնա՞ս, ակռաս հանել պիտի տամ։

— Ակռաներնիդ ես չե՞մ կարողանար քաշել, աղա՛, հարցուց մեր անձնուէր սպասաւորը, դեռ անցած օր ծառ մը քաշեցի հանեցի քօֆէն։

— Ծօ՛, իմ ակռաս մեծ օսուցիի քօֆ չէ՛, եթէ կզակս ալ տեղէն հանել փափաքիմ, գոնէ արհեստով ատամնաբուժի մը հանել կուտամ։

Ու պերճախօս մէկ կիցիս վրայ՝ ուղղուած իր հակափորին հասցէին, Մարկոս դուրս ելաւ ատամնաբոյժ մը կանչելու, մինչ ես օխտ մը պղպեղով երկու օխա օղի կը պարպէի բերնիս մէջ։

Տասը վայրկեանէն Մարկոս վերադարձաւ ատամնաբոյժի մը հետ։

Աւելորդ է ըսել թէ՝ ակռայի ցաւս վայրկենական անցած էր։

— Պիտի հանե՞նք, պիտի լեցնե՞նք, պիտի փակցնե՞նք թէ նոր ակռա՞յ պիտի չինենք, հարցուց ատամնաբոյժը։

— Դո՛ւք գիտէք, պատասխանեցի։

Ատամնաբոյժը գրպանէն սրածայր գործիք մը հանեց, յետոյ ուրիշ մէկ գրպանէն տարբեր գործիք մը դուրս ելաւ, չիչ մըն ալ՝ մէկ երրորդ գրպանէն։ Յետոյ սկսաւ քննել։

— Հանելո՛ւ է, վճռեց։

— Վազ անցէ՛ք, ցաւը անցաւ, փսփսացի։

— Երթալուս պէս կը սկսի նորէն։

Մորթուելու պատրաստ ոչխարի մը նման գլուխս ծռեցի և բերանս բացի՝ հսկայ քօֆիւրլիւկի մը պէս։

Ատամնաբոյժը չորս հինգ գործիք ալ հանեց մէկ գրպանէն:

— Քիչ մը չէ՞ք թմրեցներ:

— Հիմա՛, պատասխանեց և քանի մը շիշեր ալ հանեց տարբեր մէկ գրպանէն:

— Ա՛ ա՛ ա՛ ա՛ ա՛ ա՛ ...

Պօռալս և ակռաս ափիս մէջ տեսնելը մէ՛կ եղաւ:

— Սա՛ դեղով կարկառա ըրէ՛ ըսաւ ատամնաբոյժը՝ թերեւս իր տասներորդ գրպանէն ուրիշ շիշ մը հանելով:

— Ուրի՞շ, հարցուցի:

— Քովի ակռան սկսած է փտիլ, պէտք է լեցնել:

— Ե՞րբ:

— Հիմա՛ իսկ:

Ու այս անգամ՝ ա՛լ չեմ գիտեր քանիերորդ գրպաններէն խել մը շիշեր ու գործիքներ ալ հանելով՝ սկսաւ փտած ակռաս լեցնել:

Մարդ չէ՛ր աս, այլ ... ատամնաբոյժի խանութ:

— Հիմա ի՞նչ մնաց, հարցուցի:

— Եթէ կ'ուզէք, սա՛ երկու բաց տեղերը զոյգ մը ակռայ դնե՛նք:

— Արդեօք ատոնք ալ քովերնիդ պատրաստ ունի՞ք:

— Գրեթէ՛:

Ու զգեստին ա՛լ չեմ գիտեր քանիհարիւրերորդ գրպանին իսքիրիփիերա մը, կարմիր քաուչու և բերնի կաղապարներ հանելով՝ սկսաւ չափը առնել բերնիս:

— Վաղը իրիկուն պատրաստ կ'ըլլայ, ըսաւ ատամնաբոյժը, այցաքարտը ինծի երկընցնելով:

Փութացի կարդալ.

ՍՈՂՈՄՈՆ ԱՍՏԻԿԵԱՆ

Ատամնաբոյժ

Կը զննուի միշտ Բերայի կազինօները

— Մասնաւոր խանութ մը չունի՞ք, ըսի զարմանահար և ... սարսափահար:

— Չէ՛, պատասխանեց, շրջուն ատամնաբոյժ եմ:

— Ինչո՞ւ խանութ մը չունիք:

— Որովհետեւ, պատասխանեց խիստ պարզօրէն, խանութներու վարձքերը շա՛տ սուղցան:

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«ԱՅԳԵԿՈՒԹՔ»՝ ԳԻՐՔ ԱՆՆՄԱՆ,
ԳՐԵՑ՝ ՔԵՐԹՈՂՆ ԱԼՓԱՍԼԱՆ:

Մենք՝ գաւառացիքս, ամիսնե՛ր առաջ,
Մեծաւ հաճոյքով լսեցինք որ քաջ
Քերթողն Ալփասլան, միտք ունի աղւոր,
Հո՛ս հոն ցանցրնած տաղերն իր բոլոր,
«Այգեկութք» անուան տակ ժողվել ի մի,
Հրամցրնելու համար զայն մեզի
Որ այնքան ունինք սէր ու համակրանք
Իրեն՝ յարգելու այդ վարպետին թանկ
Անձին ու գործին հանդէպ անդադար,
Ըսենք այս անկեղծ ըլլալու համար:

×

Ի՛նչ հաճոյք եւ ի՛նչ հրճուանք թանկագին,
Առջի օր հասաւ իր Այգեկութքին
Առաջին քաղը զոր եթէ կ'ուզէք,
Ըսկիզբէն մինչեւ վերջին էջն աղէկ
Անցրնենք աչքէ, տեսնելու համար
Թէ ո՛րքան առատ, ո՛րքան անհամար
Գոհարներ կան հոն պահուած աստ ու անդ,
Ու մէկիկ մէկիկ ակն ու ադամանդ,
Քով քովի բերած, մենք ալ մեր կարգին,
Կազմենք անվարան զարդ մը թանկագին:

×

Փոխան երկու տող յառաջաբանի,
Տիկին Զապէլ Հ. Ասատուր ունի
Նամակ մը ուղղեալ առ Տիկին Եւա,
Ուր ամբողջ գորով, յարգանք կը հեւայ,
Եւ ուր գրագէտ Տիկինն բացայայտ,
Տարփողելէ ետք արժանիքն առատ
Գրքին հեղինակ Ա. Փանոսեանին,
Կանացի քնքոյշ ըզգացմամբ անգին,
Կ'ըսէ «ո՛վ Եւա, քու ամուսնոյդ ես
Քերթուածներուն մէջ՝ աղւոր ու պէս պէս,
Ըզքեզ կը տեսնեմ, քու ձայնդ ու հնչիւն...»
Ու կ'ուղղէ սրտանց շնորհաւորութիւն:
Յետոյ գեղատիպ մէկ լուսանկար
Պատկերը կայ մեր Ալփասլանին ... չար
Որ «բաժակներ»ով կը բանայ իրեն
Գրքին էջերը, ոսկի՛ համօրէն:
«Առ Եւա»ն, «բաղձանք» մասնաւորաբար
Կ'ուզէի որ ես ամէն մարդ կարդար:

Վեց, եօթը, ութը, իններորդ էջեր,
Կը պարունակեն իրենց մէջ ինչե՜ր,
Նուիրուած տունի «աղաւնիներու»
Որոնք մինչեւ վերջ կ'երգեն վո՜ւ, վո՜ւ, վո՜ւ:
Սիպիլին նուէր «Ուղիներու քով»
Խորագիր կրող տաղն իրաւունքով
Կը ձայնէ շունչով հեզիկ բայց փարթամ.
Երբ կը ներէք՝ մէկ քանին կարդամ:
«... Ի՜նչ հոգիներ կան անոյշ, անձնըւէր
Որոնք կը հիւծին, կուսան մէկուսի,
Գութ ու գորովի բո՜յն սիրահրաւէր
Լանջքի տակ անշուք կընոչ ու կուսի
Ի՜նչ հոգիներ կան անո՜յշ, անձնըւէր...»:
«Ի՜նչ փոյթ» ձայնեակը եւ «Բերան կուսին»
«Մասունք Կուսին»ն ալ առնենք միասին
«Անճառ, աննըման, ջինջ ու անապակ»
Ցոյց տալու համար հոգի մը անյագ ...:
«Առ Արուսեակ» ու զոյգ մը «Առ Ճեյլահ»
Սիրող սրտի մը ցոյց տան ահն ու վահ.
Տասներեքներորդ էջի «Նոյեմի»ն,
Ըսե՞մ, շա՛տ դպաւ հոգիիս իմին.
Ան ո՜րքան նոխ յանգ, Աստուած իմ ո՜րքան
Որոնք իրարու ետեւէ կուգան:
«Մարի»էն ետք որ այնքա՜ն անխընայ,
Կորսուած սիրոյ ցաւերը կուտայ,
«Փոքրիկ ուղին» կայ որ շատ յուզիչ բան
Կը պարունակէ, ըսեմ, անխափան,
«Հիւծեալ աղջիկ»ին խօսքը չեմ ըներ
Ամէն գովեստին արժանի է մեր,
«Պզտիկ տղաքը», էջ քըսանը վեց,
Գրական գլուխ գործոց մըն է մեծ:

×

Երեսունը մէկ էջէն բռնէ մինչ
Յիսուն երեքին յատակն աղւոր, ջինջ,
Բոլոր մանկական տողեր են որոնց
Վըրայէն եթէ կ'անցնինք լո՜ւռ ... անկոծ,
Պատճառն ա՛յն է որ, հակառակ կամքի,
Շատ երկնցուցինք մեր բելը խօսքի
Որուն համար բիւր ներողութիւն ես
Կը խնդրեմ ազնիւ ընթերցողներէս,
Ու կ'անցնիմ քիչ մ'ալ Ֆանթէզիներու
Էջերովը լոկ ես ըզբաղելու:

×

Յիսուն հինգերորդ էջին վրայ ահա՛
Օգսէնին ծանօթ նամակը կուգայ
Ուր հեղինակը բարբառով ռամիկ
Սիրողի խօսքեր կուտայ հանդարտիկ
«Իլք պահարին էր, սօխախին վարէն
«Է՛ս կէզի օր մը տեսայ բէնճիրէն.
«...Սուռաթըդ փառլախ թիւլպէնտի կըտօր,
«Հէմէն կիտես քի մարէի պըտոր ...»:
«...Ես սախսի ըլլամ, դուն զէրէն զիւմպիւլ,
«Էս խաֆէս ըլլամ, դուն մէջը պիւլպիւլ
«Դուն տիրէկ ըլլաս, ես եէլքէն պէզի,
«Հօվը պըչէ տէ պատտըվիմ քեզի ...»:
«Մանզումէ»ն արդար գովեստ մ'է թերթի
Որ ծաւալ գտած է, իրա՛ւ, ամէն դի.
«Բաժանորդի կապն ո՛վ որ խըզում է
«Մեր անզուգական թերթին Մանզումէ,
«Գիշերներն անվրէպ զայն երազում է»:
Առ պատուական մեծ Արմտանցիս իր
Յետըս կոչումը եւ մեղայագիր:
«Ապուզարթը» լաւ յըղացում մըն է
Գընահատուելու արժան ամէնէ,
«Հարցումներ»ն հապա՞ էրկան ու կընոչ
Որոնց պատասխանն է «չէ՛» եւ կամ «ո՛չ»...:
«Ալէմտաղի ներշնչումներ»էն
Ետքը մէկ երկու կտորներ մէկէն
Չինական մասալ «հովահար»ին դէմ
Անկարելի է չ'զմայլիլ, ըսեմ,
«Սիրահարութիւն» ութսուն չորրորդ էջ,
Իմաստը չունի, կը հաւատա՞ք, հէ՜չ ...
Նորէն «Հարցումներ» ու մէկէն «Ցայգերգ»
Նօթայի դրնենք այս վերջինն եկէք:
«Յորդորակները» կը յորդորեմ որ
Երկսեռ ընթերցողք զանց չընեն բոլոր.
«Տղու պատասխան»ն անպատճառ պիտի
Մեր տետուշներուն աչքէն չը վրիպի,
«Բեռնաբարձ»ին ալ գալով, անկասկած
Էրիկ-մարդերու բռ՛ւն դիրքն է ճշդած ...
Յետոյ «Առաջին ապտակը» կուգայ
Կարդալու արժան կըտոր մ'ալ ահա՛:

×

Օտարէն քաղուած ո՛չ նուազ գողտրիկ
Էջերուն խօսքը զանց կ'ընեմ, հերի՜ք
Գիրքը նիւթերովն իր մէկիկ մէկիկ
Ներկայացուցի, դուք ըրիք մըտիկ:
Արդ ընթերցողներ ձեզի կը մընայ
Ճաշակել փութալ այս քաղցր մանանայ:

Կեսարիա — ՎԱՀԱՆ ԱՍԼԱՆ

ԱԼԷՄ-ՏԱՂԻԻ ԿԵԱՆՔԷՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ ՏՈՏՈԽԻՍ

Ատեն մը երբ բժշկութիւն ըսուած գիտութիւնը սիւլիւկէն և չոր պոյնուզէն անդին չէր անցնէր, և որ սիլինտր գլխարկով բժիշկ ըսուած անմահը երբ փողոցէ մը անցնէր, կիներ՝ թէքնէյին տակէն պատուհաններէ կը վազէին «Եօր մարդը կասնի կոր» ըսելով, ահա այդ երանելի ժամանակները Սկիւտարէն երեք ժամ հեռու Ալէմ-Տաղին հիւանդանոցի տեղ կըմբռնուէր, այնպէս որ չարշաֆով դարձուելիք հիւանդները չիտակ հոն կը տանէին՝ կամ անդին կամ ասդին դառնալու համար, բայց ինչպէս երեկուան լուսանկայ գեղեցկութիւնները ժամանակին ընթացքին հետ կ'աչխին ու կը փոխուին, նոյնպէս այդ հինօրէնք սիսթէմն ալ փոխուած ըլլալով այն ատենուան հիւանդանոց Ալէմ-տաղին այսօր զբօսարան և հիյօ պիյօի Թատերաբեմ մը դարձած է։

Ապրիլի վերջերէն մինչեւ յունիսի վերջերը, երկու ամիս է courseը այդ գեղեցիկ գիւղակին, որուն կերթան աշակերտիլ ամբողջ ձմեռը խըռ կիւռով անցնող էրիկ կընիկները, նշանը եռ ընող տէրտլի օրիորդները, տասը տարի ամուսնացած և անզաւակ (ուշադրութիւն Պր. գրաշար, ձեռքդ Շ գիրին չերթայ...) ամոլները, Բերայի ալքօլահոտ մթնոլորտէն գլուխնին խաղան կըտրած բարեկեցիկները, և վերջապէս ամէն անոնք՝ որոնք տրամադրելի պիպիչ ունին իրենց սովորական պիւտճէէն դուրս՝ օդին հովին մսխելու։

Ալէմ-Տաղի, անունէն մի խաբուիք, տաղ լեռ ըսել է Թէեւ, բայց այդ լեռը զարդարուած է, ոչ թէ վայրի խոտերով և բաքաթխայով, այլ, Շրիկէլ, Սօքրաթ, Տռօն, Բառէ, Քառլըման և ուրիշ ջոջ կոտտողներ իրենց ոսկի-քուրջերը ղրկած են հոդ և ատոնք են որ կը պճնեն, և համակ բարի ծաղիկներ կուգան կը սփռուին իբր Թէ վայրի գեղջուկ այդ վայրը։

Ալէմ-Տաղի ըսուած տեղը երեւակայեցէք խոշոր աքառթըման մը մէկ յարկի վրայ, որուն սենեակները սրճարաններն են, և սալօնը Թաշտէլէնը և Խոռու պաշին, ուր բոլորը մէկ կը ժողվուին։

Հոդ, ջուրէն թէ օդէն չեմ գիտեր, մայրը աղջիկէն աղուոր կերեւայ աչքի, և տասը տարուան սրդողածներ զիրար կողջագուրեն, կը հաշտուին։

Չի մոռնամ աւելցնելու թէ՝ այն էրիկը որ կնիկէն կը նախանձի, թող բնաւ զահմէթ չընէ հոդ երթալու, որովհետեւ պէտք է ըսել թէ՝ Դատաստանական Խորհուրդը մասնաճիւղ չունի հոդ իրենց տէրտը մտիկ ընելու համար։ Ալէմ-Տաղի գացողը պէտք է հետեւեալ տասնաբանեային գիտակ ըլլայ և գործադրէ զանոնք անվրէպ։

1. — Պէտք է համակերպիլ և յարմարիլ այն զբօսանքներուն՝ որոնք չի ճանչցածներդ կը յղանան։

2. — Զգել որ կնիկդ յարաբերութիւն հաստատէ անոր ասոր հետ, նոյնիսկ հազ չըրած մարդուն հետ եթէ ընկերանայ պտոյտի համար, պէտք է լռութիւն պահել։

3. — Հասուն աղջիկ եթէ ունիս, Ալէմ-Տաղի գացած օրէդ սեպէ թէ գիշերօթիկ վարժարան մը տուիր, պէտք չէ փնտռես թէ ո՞ւր է, ո՞ւր մնաց։

4. — Գիշերը պէտք է կնիկէդ և աղջիկներէդ շատ առաջ սենեակդ քաշուիս, և երբ անոնք ուշ ատեն վերադառնան, եթէ արթուն ալ ըլլաս՝ սուտ քուն պէտք է ձեւացնես և խռկաս։

5. — Մէկ անկաճդ խուլ և մէկ ու կէս աչքդ կոյր պէտք է ընես, չուրջդ անցածը չի տեսնելու և խօսուածքը չի լսելու համար։

6. — Տուր ըսուած ատեն նորէն կրկնել չի պիտի տաս, նէվազիլիդ ժամանակ, Թաշ-

կմնակից պէս՝ դրամապանակդ ձեռքէդ պակսելու չէ։

7. — Ծանօթ թէ անծանօթ եկող հիւրերուն հետ պիտի վարուիս այնպէս՝ իբր թէ պապայիդ տղաքը ըլլային։

8. — Երբ սրճարան մը նստած ես և տեսնաս թէ քուկիններդ սանկ քիչ մը տաքօրէն կը վերաբերուին կոր չի ճանչցած մէկուդ և կամ նոյն իսկ հազ չըրած մէկուդ հետ, պէտք է մեկլդ պատրուակէս և մեկնիս, ազատ ձգելով զանոնք։

9. — Երբ պտոյտի ժամանակ կովակառքին մէջ մշտոցը ձեռքդ տան ու կնակդ դարցնես ու եւիդ նոյն իսկ պսակ ալ կատարեն՝ չպիտի դառնաս՝ մէկ բարձի վրայ ծերանաք մը նոյն իսկ ըսելու համար։

10. — Վերջապէս երբ միւսիւ մը քեզ ըսէ՝ «սա նամակը օրիորդին տուէք պատասխանին կսպասեմ» նառկիլէն ձգելով պէտք է անմիջապէս տանիս և պատասխանը բերես, հաւատարիմ Ֆաքթօրի մը պէս, առանց նոյն իսկ յոնքերդ շարժելու։

Ասոնք երբ կեա առ կէտ գործադրելու ըլլաս, գիտցիր թէ Թաշտէլէնի ջուրը որ քարը ծակելու չափ զօրաւոր է, չպիտի կըրնայ սիրտդ ծակել, հանգիստ պիտի ընես։

Ատեն մը երբ այս եղանակին Ալէմ-տաղի հազալու, տքալու, էօֆ բիւֆի ձայներ կը լսուէր, հիմա՝ խաղ, ժամի և բըմը բըմը, անչուշտ սիրային։

Տարթուան վեց օրը որչափ նեղացուցիչ, սակայն մէկ կիրակին մոռցնել կուտայ հոգտնուողներուն ամբողջ միւս օրերուն ձանձրոյթը։

Հիմա նկարագրենք կիրակին, իր պտոյտի վայրերուն մէջ։

Նախ ըսենք թէ՝ մեծ մեղք մը գործած չպիտի ըլլայի եթէ երկու տող չի նուիրէի գերահռչակ պանդոկապետ Յովակիմ աղային, որ իր համեստ վիճակին մէջ Բեռա-Բալասի հովեր կը փչէ։

— Օ՜ ... հրամմեցէք էֆէնտիս, բարի եկաք հազար բարի ...

Անհա յանկերգը իր սովրած բարիկ ընդունելութեան, ուրկէ վերջ երբեք անգամ չի նայիր, բացի մեկնած օրէդ, որ երեսէդ աւելի ձեռքիդ կը նայի, այնքան դրական մարդ է պէտք է ըսել։

Նկարագրենք ընտանիքի մը հետ ըրած սակարկութիւնը, որով պիտի կրնաք գաղափար մը կազմել իր գործունէութեան վրայօք։

Երկու կառք կը կենան օթէլին առջեւ, էրիկ կնիկ, երեք աղջիկ և տղայ մը։

— Օ՜ ... հրամմեցէք էֆէնտիս, բարի եկաք հազար բարի ...

— Յովակիմ աղային օթէլը ո՞ւր է, կը հարցնէ ամուսինը, թեւին վրայի բառարգսիւն մէկ կողմ դնելով։

— Այո՛, հոս է ...

— Բիչ մը ինծի կը կանչե՞ս ...

— Ո՞վ կանչեմ աղաս, ինչ պիտի ըսէիք...

— Կանչէ քի բազարլըխ ընենք հետը...

— Հի՛, հի՛ ... ես եմ իշտէ Յովակիմ ըսածնին ...

— Մառտիկ աղա, հիչ օթէլճիի նըլմանիր կոր, չելլայ ապուխ սուպուխ բան մը ըլլայ, կըսէ տիկինը չորս դին նայելով ...

— Էյ ինչէ՞ն գիտնամ քի դուն Յովակիմն ես տէյի ... խօսք կ՚առնէ Մարտիկ աղա, գրպանէն պատրաստ սիկառ մը հանելով։

— Ճանըմ նասըլ ըսեմ, իշտէ քըռք եըլըն փտտած Յովակիմի, պունըն պաչկա նիւմէռօսը վա՞ր մը ...

— Էյ բէք աղէկ, մէկ քանի օր պիտի կենանք, օտա ունի՞ս ...

— Հոս չունիմ ամա՞, դիմացի տունն ալ ես բռնած եմ, ըռահաթ ընել կուտամ ...

— Ամա սա ալ ըսեմ քի, մենք էրիկ կնիկ ենք ամա զատ օտա կը պառկինք ...

— Աղէկ ամա, Աստուած էօմրէրնիդ էվէլցունէ, ատ պիչիմը տունը կրնաք ընէր, հոս նեղուածք ենք, չեմ կրնար ...

— Ճանը՛մ, երկու օտա սուֆա մը չե՞ս կրնար տալ, կըսէ տիկինը կէս բարկացած։

— Աֆ կընէք տիկին ամա, դուք տո՞ւնբռնել եկաք չէնէ մի օթէլ ...

— Ինչ ըսել է, հարկաւ դրամը անոր համեմատ պիտի տանք ...։

Յովակիմ աղան դրամին ձայնը առնելուն պէս՝ կը կոտրտուի եւ՝

— Շատ աղէկ, հրամմեցէք տէ բան մը

կընենք ըսելով՝ ածան պէքեարները մէկ սենեակ կը լեցնէ և ասոնց զատ երկու սենեակ կը յատկացնէ։

Ինչպէս տեսաք՝ Ցովակիմ աղան իր գործին մարդն է, որուն նմանը կարելի չէ գտնել ... Ալէմ-տաղիի անտառներուն մէջ։

Թաշ-տէլէնին մէջ։

— Բերուզի՛կ, ջուր մը տահա բեր, ամա թազէ թազէ պաղ պաղ ...

— Աման տուտու, տալախ եղար ալթըխ, հէրիք խմես ...

— Եէք որ չէնէ սահաթներով կը պտրտիս կոր, չի յոգնեցար տէ հիմա տամարներդ կտրեցաւ ...

— Ամա՛ն ... աղէկ քի սրտեղը ճուր մը կայ ...

— Ինչ ընենք աղջիկս, մենք հոս ճուրի կուգանք, դո՛ւք ճուրճինայի ...։

Ուրիշ խումբ մը։

— Օ՛խ ... Նորէն աշխարհք եկայ գիտեմ քի, կըսէ տիկին մը, երեսի վէլօն վեր առնելով ...

— Նորէն աշխարհք եկա՞ր նէ, իրար ձըգենք տէ նորէն զատ զատ կարգուինք քա Էպրո՞ս, ինչ ըսիր ... կը պատասխանէ ամուսինը։

— Ուզածդ ատ է ամա, թուխթալ եմ կըլլեր, թէպ չի պիտի տնկեմ ճիվերս ...

— Չէ՛, սանքի դուն ատանկ ըսիր տէ սիրտս հոր ըրաւ ...

— Քա տէրտ մընէր, գիտեմ քի իս չես սիրեր կոր ամա, ես ալ սիրտիս դրած չունիմ, օրս օր կընեմ կոր իշտէ ...

— Սա ինչ հասկցար, հինգ մէճիտիյէ առապայի փարայ տալ տուիր տէ ելար եկար նէ ...

— Օխ օ՛ր, օխ օ՛ր ... ասկէ ետ աչքովս մարդ սիրելդ տեսնամ նէ Արեւմուտք պիտի դառնամ, ի՛նչ կուգես նէ ան ըրէ, գիտեմ քի նորէն աշխարհք եկայ ... օ՛խ ... բացուէ սիրտ ուրախացիր մարմին ...

— Ան հոս է քի ատանկ կըսես կոր, տուն երթալնուս կիպի խենդ քօթոտներուն պէս չորս դիս կը դառնաս ...

— Ը՛նհ ... վայ կլխո՛ւդ ... ալթըխ հասկցայ էրիկ մարդ ինչ ըսել է նէ, եաղմա չիգայ, սանկ չորս դիդ նայէ քի զայիֆ կընիկ կը տեսնա՞ս կոր ... ամէնքը ծարերը թող տուեր են հիմա, իզդ պէլլի մընէր, աչկիս դէմը մըլլա՛ր տէ քէֆդ նայէ ...

— Աղէկ ամա չելլաս դուն ալ ադ մօտային սիւլիւկ ընես, իմ արունս զէ՛իրլի է, գիտե՞ս եա ...

— Էմմիշ ընողը թող մտմտայ ... օ՛խ ... տա ճուրին թէսթին տուր ...

Այլ առակ լուարուք։

— Քա գուզում Ցարսաւիչ աղա, տա զուռնան չալել տուր քիչ մը ... կըսէ տիկին մը որ գլուխը տաքցուցած՝ պլուզին կօճակները քակած էր ալ։

— Խե՛նդ ես քա՞ ... էրիկ մարդիկ պիլէ չեն ըներ կոր ըրածդ ...

— Հոս Ալէմ-տաղի է ... կը վերցունէ։

— Խօճա Ալէմ-տաղին կը վերցունէ ամա դուն երկու խատեխը չես կրնար վերցունէր, սա հալդ նայէ մէյմը ...

— Աչկիդ նասը՞լ կերեւամ կոր ...

— Սո՛ւս քա, մեզ մտիկ կընեն կոր ...

— Սիրողիս նամակը չեմ կարդար կոր ... էրիկս չե՞ս մի ... չօգ չէյ ...

— Հասկցանք, բռթբները ժողվենք տէ բալամառը քակենք երեսի ճուրով ...

— Քա զուռնա մը չի՞ պիտի լսել տաս ...

— Քիչ մը տահա սապռ ըրէ տէ, Դաքռէլ հրեշտակին զուռնան չիֆթ լսենք, դէրէ ատանկ խախք եղայ քի, մեզառը բէք անուշ կերեւայ կոր աչքիս ...։

Ուրիշներ։

— Միւսիւ Արա՞մ ... ինչ կարծիք ունիք այս հրաշագեղ անտառին մասին ... կը հարցնէ օրիորդը որ չրբրռ չրբրռ քրտինք կը թափէր տաքէն ...

— Պէտք է մարդ բանաստեղծ ըլլայ օրիորդ, զգալու համար այն անհամար անուշութիւնները, որոնք մէն մի ծառէ, մէն մի տերեւէ դուրս կուգան ...

— Մալ-խուլյուսիի ճամբան ... ինչպէս գտա՞ք ... կաւելցնէ օրիորդը միւսիւին, ակնարկելով այն պտոյտը՝ զոր ուրիշ օրիորդի մը հետ ըրած էր։

— Օրիո՛րդ ... ձեր այդ խայթոցները՞ ... ձեր այդ կծուկները՞ ... ա՛խ, որչափ անգութ պէտք է ըլլայ մարդ, որպէս զի ձենէ

ուրիշի մը հետ բաժնէ այն սէրը, որ ձեզ հետ շաղուիլ (.՝) ուխտած է ...

— Շատ լաւ, ինչէ՛ն հասկնամ այդպէս ըլլալը, կրնա՞ս համոզել զիս ...

— Այս իրիկուն Խոռու-պաշիէն դարձին անշուշտ միասին պիտի ըլլանք, հոն կը խօսիմ ձեզ այս առթիւ, իսկ եթէ չի կրնամ վերջացնել խօսքս, ճաշէն վերջ չառտախին ետին կսպասեմ, լուսինը այս գիշեր ուշ կելլայ, մութէն կրնանք օգտուիլ։

ԽՕՌՈՒ-ՊԱՇԻՆ.

Ալէմ-տաղի գացողի մը հարցնես թէ է՛ն աղուոր վայրը ո՞ւր է, անմիջապէս Խոռու-պաշի պիտի ըսէ, եթէ ճաշակ ունի և թէ նաթիւռէլ գեղեցկութիւններէ համ կառնէ։

Անտառին բացը, ամբողջ դաշտին վրայ նայող այդ վայրը թատրը կը հանդիսանայ երեկոյեան խրախճանութեանց, ուրկէ կը բաժնուին՝ օրէ եկող ընտանիքները, և ուր ձիաւոր միւսիւներ իրենց տէպիւն կընեն յաչքս ... օրիորդներու։

Իրիկուն է ժամը տասն և մէկին մօտ։ Բոլոր ֆայթոնները զարդարուած են տեսակ մը տերեւներով, որոնց էյրէքի կըսեն, միակ նշանը Ալէմ-տաղիէն դառնալուն, եթէ պարպուած քսակները չի համարձակին խոստովանիլ իրողութիւնը։

Թաշ-տէլէնի վճիտ ջուրին յաջորդած է ճերմակ ջուրը Նիքօլիին կամ Բօսֆիին, ցերեկուընէ էվէլցուկ կերակուրները իրը աղանդէր շարուած են սեղաններու վրայ, և սաճ սեռէմօճի։ Ամէնքը կը ճնկեն այն գաւաթներէն՝ ուրկէ կառապաններն ալ կօգտուին իրենց փոշոտ պեխերը թաթխելով։

Արեւը իր մեռաս բարովը կըսէ, քաշուելով հեռաւոր բլուրներու ետին, ձիերը կը լծուին տակաւ, սէլէները կը կապուին, զըլխարկները կը դրուին, բռնտռաները կը թազէնան, ժառրթիէռները կը տեղաւորուին, կուրծքերը կը թխմուին, քօռսէներ կը թուլնան, ձեռք ձեռքի մէջ կը սեղմուին, նշանակալից ատիճօներ կը փոխանակուին, լաթէռնան կը ճռնչէ, զուռնան կը զռնչէ, անիւները կը թաւալին, ժտրակները կը շաչեն, և անդին միւսիւ մը ճերմակ բանթալօնով, չի ճանչցած՝ այլ խելքը անոր տուած ժատ-ժաղէլին ի ճախա, հոբ վար կ'իյնայ ձիէն... կրկին կը նստի, սէր բային ապառնի ընդունելութիւնը Տուտուռլու շարունակելու համար։

Գիշեր է.

Դառնանք Յովակիմին օթէլը, ուր խրոնուած են անօթիներ, զանդակը կը զարնուի և սեղանը լիքն է (.՝) իսկ իր սուլուութեանը համար դուրս ձգուածներ ... դասալիքը։

— Աֆէրիմ Յովակիմ աղա, էնկինառը բէք աղուոր եղեր է ...

— Եաշա Յովակիմ եաշա, էթ սքանչելի օլմուշ ...

— Պռավօ Յովակիմաքի, բէռիֆօսմօ լինէ թօ եօուռթի ...

— Պռավիսսիմօ չիպի Եուակիմ... մունչա գալապալիք, մա պօնօ մանճաթօ ...

— Ա՛ ... էքսէլան, մա բառօլ սէթ էքսէլան սա սէ ֆէ ավէք տիւ պէօռ ֆռէ ...

— Օլուր սա տա պու գատար օլուր, էլինէ սաղլըգ Յովակիմ աղա ...

— Իթ իզ վէռի նայս բիլառ՛ու ... վուիթ է՛նկանառ, օլ ռայթ կիվ մի լիթըլ մօռ ...

— Աննատրդ ամա թապագտա պիր չէյ գալմատը՝ նէ տէ քէսէտէ, կըսէ Յովակիմ աղան և բոլորը մէկ կսկսին խնդալ։

Կէս գիշերին երբ ամէնքը պառկած են այլեւս, և թէ հեռուէն հովառտա մը դեռ զարնել կուտայ լաթէռնան, որուն անուշ արձագանգը նէննիի պէս անուշ քուն մը քաշել կուտայ օթէլը գտնուողներուն, գերեզմանէն փախչելու պէս ճէր ճերմակ ստուեր մը մեղմիւ կուգայ Յովակիմ աղայի պառկած սենեկին դուռը ափ առնել,

— Բա՛ց Սուրբուհի, բա՛ց, ես եմ ...

— Նասը՞լ Սուրբուհի, ի՞նչ կուզես ...

— Եապանճի չէ ճանըմ, ես եմ Սուրբիկ բաց դուռը ...

— Նէ տէյօրսըն ճանը՞մ ... նասըլ Սուրբիկ ... սխալ է սխա՛լ ...

— Բա՛ Սուրբի՞կ ... օտայէդ էրիկմարդու ծան կուգայ կոր ..., պաց նայիմ տա դուռը ...

— Բէնտինէ կէլ, պէտք ունիս նէ սօլըդ դառցիր ... ամա ճակատդ չի զարնես ... կը ճայնէ Յովակիմ աղա քունը գլոխը ...։

— Կոտրեմ պիտի Սուրբի՛կ, բաց դուռը ...

— Յովակիմ աղա տեսնելով որ դուռը պիտի կոտրեն, անկողնէն ցատկելով դուռը կը բանայ, և դէմ դիմաց կուգայ Մառտիկ աղային հետ, այն որ առտուն ըսած էր թէ երիկ կնիկ մէկ սենեակ չեն կրնար պառկիլ։

— Ի՞նչ է աղբար, կէս գիշերին ի՞նչ կուզես ...

— Պէ ճանըմ, կնկանս օտան ո՞ր թարաֆ նէ ...

— Կէս գիշերին խօռթլախ պիտի ըլլայիք նէ, ինչո՞ւ իս ալթ իւսթ ըրիր ... պապա՜մ ... հոս իրաւ քի օթէլ է ամա, Ալէմ-տաղիի օթէլ է, Պէյօղլուի չէ ..., գնայ տեղդ պառկէ տէ, վաղը խաբու խաբամա տուն մը բռնէ եավրում, Յովակիմը չի կլլեր ...։

Լուսինը ամպի մը ետին կանցնի կը պահուըտի, նոյն պահուն Մարտիկ աղան ալ վերմակին տակը։

ԼԻԼԱ

ԲԱՑԱՌԻԿՆԵՐԸ

Ստացանք ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼի երկրորդ բացառիկ թիւը, որ իր գերընտիր ամբողջութեամբ կը գերազանցէ նախորդը։ Անոր մէջ մէն մի յօդուած ստորագրուած է է՛ն ծանօթ գրիչներէ, որոնք շատ սուղ կարտադրեն։

Արեւելեան Մամուլի խմբագրութիւնը գովելի է պէտք է ըսել իր այս երկրորդ ձեռնարկին յաջողութեանը համար :

ԾԱՂԻԿ

Գեղեցիկ եւ հետաքրքրաշարժ թիւ մ'է նաեւ ԾԱՂԻԿ մանկանց հանդէսին բացառիկը, որ հրատարակուեցաւ Սաքաեան տըպարանէն, նոխ պատկերներով համեմուած : Ծաղիկի անդրանիկ այս ձեռնարկը իր առաջին քայլին մէջ խոստմնալից է արդարեւ : Յաջողութիւն կը մաղթենք մեր ժրաջան պաշտօնակիցներուն :

ՍԱԱՐՏՈՒԿՆԵՐ

ԳՈ՛Ղ ԿԱՅ...

Ա.

Բերա, Պայըր փողոց, երրյարկ տան մը է՛ն վերի սենեակը, ուր անկողինի մը մէջ Պարոն Զըբզըբեան կը խռկայ. Քիչ ետքը խռկալը դադրեցնելով, յանկարծ պառկած տեղէն թիզ մը վեր կը ցատկէ ու անկողինին մէջտեղը կը նստի:

ԶԸԲԶԸԲԵԱՆ., — Էօ՜ֆ, վա՜յ չունչանորդիներ, ես հիմակ խերերնիդ կանիծեմ ա՛, արիւնարբու կենդանիներ, իրաւ թէ ձեզի այս իրիկուն միջատասպան փոշի պիտի հըրամցնէի, բայց աղդեցիկը սա ինչ դեղարանը կը ծախեն եղեր. վա՜յ չունչանորդի եւ կընճիթաւոր փոքրածաւալ վիթխարի կենդանիներ, եթէ քիչ մըն ալ կարեւորութիւն չտայի խայթուածներունուն, միսերս լօփ լօփ պիտի հանէիք պէ՛. Է՛ հիմակ, ասոնց հախէն գալու համար պէտք է բռնել բռնել ու ճզմել ընել (խնայողական լամբարը քովը առնելով) օ՛ն, մէկիկ մէկիկ, երիցս անիծեալ կենդանիներ, նաբուգոդոնոսորին չեմ գիտեր քանի աստիճան բորբոքեալ Ֆուռունը ...։ Վա՜յ, դուն ալ միտքդ դրած ես ձեռքէս խուսափի՞լ՝ որ օքսմօպիլի արագութիւն կուտաս տոտիկներուդ, ահա ձեռքըս վրադ կիյնայ ու ասանկ չինանայի մէջը կը նետեմ. (մըլուկը ճիշդ պատրոյգին վրայ իյնալով՝ կը մարի փոքրիկն լամբարիկ աղբարիկը ...) ա՜ս ինչ եղաւ, չորս կողմս մութ, եւ ես որ մութի մէջ պառկիլ վարժուած չեմ նէ, վա՜յ չունչանորդի մլուկ հա՜յ, հէլէ սա մլիքորին խառնած ապո՛ւրը նայէ, կարծես թէ դիտմամբ ըրաւ աւանակը. հիմակ ի՞նչ ընեմ, ճար չկայ, վար իջնալու, լուցկի գտնելու եմ, այո (անկողինէն վար կիջնայ) բայց կամաց քալենք, չըլլան վարէն իմանան (կոյրի մը պէս խարխափելով սենեակէն դուրս կելլայ):

Բ.

Զբզբբեանի պառկած սենեակին տակի սենեակը. անկողին մը ալ հոս կայ, որուն մէջ երկու կիներ պառկած են. մէկը խուլ՝ բառին ամենախուլ նշանակու թեամբը, իսկ միւսը՝ ոչ-խուլ:

ՈՉ-ԽՈՒԼ. — (Գլուխը բարձին քիչ մը վեր առնելով) *Որ տեսն է վերը օտքի ծանր մը կառնեմ կոր, կատուի ալ քալուածք չէ, տանկըր տանկըր ծան կելլայ կոր, քա կող չըլլայ, եանի տողերու կուգամ, աման, քուրքս արթնցունեմ, անոր ալ.ընտոր հասկըցունելու է չիյտեմ. ամա՛ն Աստուածամայր օտքի ծանը հիմակ ալ սուքայէն կուգայ կոր.* (խուլ ֆոյրը հրմշտկելով) *քա հի՛չթ, հի՛չթ...*

ԽՈՒԼԸ. — *Հէ՞, ի՞նչ կայ...*

ՈՉ-ԽՈՒԼԸ — *Կո՛ղ, կո՛ղ կայ...*

ԽՈՒԼԸ. — *Հէ՞...*

ՈՉ-ԽՈՒԼԸ — *Կո՛ղ քա, կո՛ղ, վերը, վերը, կող, կող...*

ԽՈՒԼԸ. — *Քա պիր տիւղիւ է տող տող կըսես կոր, ո՞վ տող եղաւ...*

ՈՉ-ԽՈՒԼԸ. — *Եուժուրճախ մը պօղազիդ քէօքի՛ւն, տէյօր հասկցնենք նէ տունը պիտի պարպեն, պարէ վար ծան տամ.* (ոտքովը, բաթ, բաթ, բաթ, գետին կը զարնէ):

ԶԸԲԶԸԲԵԱՆԻ ՀԱՅՐԸ. — (վարէն) *Ի՞նչ է ա՜ն...*

ՈՉ-ԽՈՒԼԸ. — *Կո՛ղ կայ...*

ԶԸԲ. ԻՆ ՀԱՅՐԸ. — *Համմէ՞...*

ՈՉ-ԽՈՒԼԸ. — (Պ. Զբզբբին սանդուխներէն վար իջնալը լսելով) *Ամա՛ն, կողը վէրտիվէնէն վար կիջնայ կոր...*

ԶԸԲ.ԻՆ ՀԱՅՐԸ. — *Հէ՞...*

ՈՉ-ԽՈՒԼԸ. — (Պարոն Զբզբբ արդէն վար իջած ըլլալով, ինչպէս կըլլայ դուռին խնձորակին կուգայ ձեռքը). — *Հասի՛ր, տուրբէնիս կը խառնէ կոր, օտքդ պագնեմ հասիր։*

Գ.

Պարոն Զբզբբեանի հօրը եւ մօրը պառկած սենեակը: Հայր Զբզբբ անկողինին վար իջնալու կը պատրաստուի. կընիկը կարթնայ:

ԿՆԻԿԸ. — *Քա ի՛նչ կայ...*

ԷՐԻԿԸ. — *Վերը կող կայ եղեր, ես կերթամ կոր...*

ԿՆԻԿԸ. — *Քա ի՞նչ, աման դող կելլամ կոր, չերթաս հա* (թեւէն կը բռնէ):

ԷՐԻԿԸ. — (Կնկանը ձեռքէն ճողոպրիլ ջանալով) *Պռռա՜ա՜ք...*

ԿՆԻԿԸ. — *Քա աման.*

ԷՐԻԿԸ. — *Պռաա՜ք, էշեանիս կը տանին կոր.* (թեւը կնկանը ձեռքէն ազատելով դեպի սենեակին դուռը կերթայ, դուռանը նիգը արդէն կոտրած ըլլալուն ունելի մը նիգի դերը կը կատարէ եղեր, Զբզբբեան հայր այս ունելին ուժով մը քաշելով դուռը կը բանայ ու վեր կը խոյանայ, մինչ կինը պատուհանը վազելով կը բանայ եւ կսկսի պոռալ. — *Օգնութի՛ւն, դրացիներ հասէ՛ք, կող կայ, հասէ՛ք, դրացիներ, օգնութիւն։*

Դ.

Սանդուխին գլուխը. սուտեր մը մութին մէջ ասդին անդին կը շարժի՝ պարոն Զբզբբեանն է, ու անոր դէմը, ունելին սանկ մը երկնցուցած Զբզբբեանին հայրը, որ եսեւ վրան կերթայ սուտերին ու ես ես կը քաշուի վախէն:

ԶԸԲԶԸԲԻՆ ՀԱՅՐԸ. — *Թէպիւ օ՛լ...*

Պ. ԶԸԲ. — *Հա... հա...*

ԴՈՒՐՍԷՆ. — *Հասէ՛ք դրացիներ, կող կայ...*

ԶԸԲ.Ի ՀԱՅՐԸ. — (Եսին դառնալով) *Հասէ՛ք պէ, պաշխա մարդ չիկայ քի եարտրմի հասնի* (քանի մը քայլ կառնէ դեպ ի սուտերը) *ուլան թէպիւ օլ...*

Պ. ԶԸԲ. — *Հայրիկ... ես... եմ...*

ԶԸԲ.Ի ՀԱՅՐԸ. — (Կարծելով որ տղուն ձայնը վերի սենեակէն կուգայ) *Մի՛ վախնար զաւակս, ես կողը եախալամիշ ըրի, հէ՛մ հիմակ գործը պիտի լմնցնեմ, վար եկուր, դուն ալ եատեւէն յարձակէ...*

ԴՈՒՐՍԷՆ. — *Հասէ՛ք, հասէ՛ք, դրացիներ գող կայ...*

Պ. ԶԸԲ. — *Հայրիկ...գո...գո...գո... գող չէ... ե... ե... ես եմ... քու... քու տղադ...թա...թա...թա ... թախտա ... թախտա...պի...պի... թի կը ժողվէի կոր մէ...մէ...մէկ հատը չի... չի... չինա ... նանային մէջը ինկաւ մա...մարեց... քի... քի...քիպրիթ կը փնտռեմ կոր...*

ՀԱՅՐԸ. — .....

ԱՆՄԵՌՈՒԿ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԵՐԱ. — Ով որ դեռ կը վարանի հաւատալ թէ՝ ամառ ենք մտած եւ օդերը տաքցան, կը խնդրենք իրիկուն մը թէփէ պաշիի պարտէզը գալ՝ աչքով տեսնելու համար կիսամերկ տիկիններն եւ օրիորդները, որոնց պլուզներուն տակէն՝ Եւայի շապիկն է որ կերեւայ...։

ՆՈՅՆ. — Անցեալ իրիկուն Թագսիմի պարտէզին մէջ, չիք միւսիւ մը երբ մինակը բուռ ընող տիկնոջ մը պոչին փակած հետը մէկտեղ կը դառնար, աւելի վարպետորդիէ մը պատուասիրուեցաւ՝ գաւազանի ամուր հարուածովմը։ (Վրան հorիւնճեէ կապէ միւսի՛ւ.... Ծ. Խ.)։

ԱԼԷՄ-ՏԱՂԻ. — Այս տարի կարծես հիւանդանոցի մը սիւֆիւռսալն է հոս. հազ նէվազիլ, հէփչու, տրքտրքալ եւ այլովքն հանդերձ լսելի են տիւ եւ գիշեր, հովառատաներ են շատ քիչեր։ Կը վախցուի որ Յովակիմ աղայի օթէլին ֆօնտօները մեծ անկում մը կրեն։

ՆԱԲՕԼԻ. — Պոլսեցի վիռթիօզին ... գործերուն տրուած դրամը եւ զանոնք հրատարակելնիս ուրիշ բանի համար չէր, բայց եթէ միջոց մը, որով կարենայինք մեր միւս կարեւոր նօթաները ռէքլամ ընել անոր լայն կողքերուն վրայ։ Կը խնդրուի նօթայէն առաջ կարդալ կողքին վրայի ռէքլամները մեր գործերուն։ (Վա՛յ սարսափելի... Ծ.Խ)։

ԻՆԷՊՕԼՈՒ. — Տեղւոյս ջութակահար Տէր Հմայեակ քահանան Արեւելքի 6797 թիւին մէջ իր մասին գրուած իսկութիւնը, նամանաւանդ սալօնի մը մէջ իսկ հրապարակաւ պարելը կարդալով, նոպաներու ենթարկուելով՝ գիշեր ցերեկ զառանցելու վրայ է, բայց չնորհիւ բժշկական դարմաններուն՝ վիճակը բարւոքուած է կսուի։ (Ձե՞ս գիտեր թերթեր, կը գրեն դէմ, թեր, կոչումը ա՞յդ էր, դու չունի՞ս skrsէր, ա՛ Տէրտէր.Ծ.Լ.)։

ՊԱՆՏՐՄԱ. — Հաճրագիտակի օրլախճիութեան դասընթացքը ջերմապէս յառաջ կը տարուի... գեղեցիկ սեռին կողմանէ. Պատ. Խմբագրութենէդ կը խնդրուի միջոց մը խորհիլ այս առթիւ։ (Ձէ՛ մի որ Յիսուս ըսաւ. «Ձգեցէք պղտիկները որ ինծի գան», մինք ալ կըսենք. «Ձգեցէք աղւորներուն որ կարդան են դարձի գան... Ծ. Լ.)։

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Ոսկի ջուր ակնոցին եւ պիղ պեխերուն ապաւինող գրրրրրրրրրագէտ միւսիւ մը լապտեր ի ձեռին աղջիկ փնտռելու է ելեր. զրոյցի մը նայելով ֆօթօկրաֆը էքսբօզէ պիտի ընէ եղեր նաւամատոյցին վրայի շաքարավաճառին, ուր սովոր են կախել զանազան աղդեր։ (Այս լուրը ինքնին քեղ բան մը չ'աղդէ՞ր... Ծ. Լ.)։

ՍԱՌԸՆԱՐ. — Թէեւ տեղւոյս սէզօնը չէ սկսած, սակայն կարգ մը ընտանիքներ օգտուելով առիթէն, ճահճիրիճիճճօ հավասի զբօսանքներէն ետ չեն մնար կոր։ (Զդուշացէք, հավան սէրթ չի դայ ... Ծ. Լ.).

ՍԿԻԻՏԱՐ. — Զիֆթլիկի պարտէզը պօմօնթի ըլալէն ի վեր, կիրակի երեկոյները ահագին բազմութիւն մը կը դիմէ կոր. զբոյցի մը նայելով, խժուած դարեջուրին հետեւանօք խխնջելու ձայներ կը լսուին կոր եղեր՝ մերթ քառաձայն եւ ուշ ատեն բազմաձայն...։

ԳՈՒՄ-ԳԱԲՈՒ (Ռէսք). — Ակնոցաւոր պարոնը, որ չա՞տ զգացուած էր Միսէն անդարձ բաժնուելովը, ու արցունքի մէյ մէկ տէրօներ դարցուցած էր իր չեմ գիտեր ինչ գոյն աչուկները, իր սլաաա

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ԶԱՆԳՍՊԶՍԳԼՊՆԱՑ

Արևանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՑ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ ԸՆԿ.

Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ և գիներու անմրցելի ժանութեամբը շահած է բոլոր իրեն դիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց բելորիններու և տղայոց շիք և դիմացկուն fourիւմներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից։

Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրշ. է։

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին։ 50—36



ԱՌԻԹԷՆ
ՕԳՏՈՒԵՑԷՔ
ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ
Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԷ
(Ճեւալ պէտ խանին)
տակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը, որք ուղղակի ներածուելով Սէյլանէ, Ջինաստանէ, Հնդկաստանէ, Ճավատ եւ Ճապոնէ։

Ամենէն դժուարահաճներն իսկ կը գտնան գոհանալ թէյերու թարմութեամբ հոտովը ու համովը։

Փնտռեցէք մանաւանդ իրենց յատուկ խառնուրդները, որք կը ծախսուին մեծ և փոքր քանակութեամբ։

Ուշադրութիւն մարքային։

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՌԱՔԱՔԵՐՔ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐՈՎ ԵՒ ՃՈԽ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին		50 դրշ.	Վեցամսեայ	25 դրշ.
Գաւառաց համար	»	»	54 »	»	27 »
Արտասահման	»	»	12 ֆր.	»	6 ֆր.

ԿԱՆԽԻԿ

ՀԱՍՑԷ՝
ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ, Պապը-Ալի հաստեսի Ասատուրեան տպարան թիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կրնան նաեւ բաժնեգիները։

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանատաբանքով և կամ բանքայի փուլով 20 հատ 20 դրուշի հաշուով։

ՄԵԾ ԿԱԶՄԱՏՈՒՆ

ՀԵՐԵԹԻԿ ՊՕՅԱՃԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճաssէսի թիւ 50

Սոյն առաջնակարգ կազմատունը՝ որ մօտ երեսուն տարուան հաստատութիւն մըն է, իր գեղեցիկ գործերովը, մաքրութեամբը և արագութեամբը արդէն մեծ համբաւ շահած և գրաւած է վստահութիւնը ամէն անոնց՝ որոնք փորձով հաստատած են այս առաւելութիւնները։

Հերեթիկ էֆ. Պօյաճեան այս անգամ Եւրոպայէն բերել տուած ըլլալով արհեստին կատարելագործեալ կարգ մը մեքենաներ, այսօր ի վիճակի է մրցիլ մայրաքաղաքիս բոլոր կազմարարներու արտադրած գործերուն հետ։

Անգամ մը՝ փորձելը բաւական է։

ԳԱՌՆԻԿ ՔԷՇԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հաճօ-Բուլօ խան իբ. 2

Նախ փորձառուները, յետոյ խաբուողները միայն գիտեն էթ ո՛րչափ դժուար է, դտնել ու գտնել ապրանքներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճաշակաւոր և թէ . . . աժան։

Գառնիկ Քէշիշեան վաճառատունը թօհաֆիէի էն առաջնակարգ Եւրոպական գործարաններէն բերել տուած է տեսակ տեսակ կանանց և արանց յատուկ Ֆանէլաներ, գուլպաներ, բաշկինակներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեններ, Ֆիլֆիտոն և խիստ ճաշակաւոր ներգնաւապիկներ, գլխու շարբեր, քաշ ֆուռսկներ և.այլն.և.այլն.

Ջերմապէս կը յանձնարարենք անգամ մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն դիմելով պիտի հաստատեն թէ՝ գինեռու աժանութեան, տեսակի ազնուութեան և ապրանաց տոկունութեան երեք առաւելութիւնները ուրիշ ո՛ և է տեղ կարելի չէ գտնել։